ԱՐՏՈՆՅԱԼ ԴԱՍԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ (XIX դ. 80—90-ական թվականներ)

ԴԱՍՊԱՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

XIX դ. 80—90-ական թվականներին ռուսական կայսրության, բնական է նաև Արևելյան Հայաստանի, բնակչությունը շարունակում էր բաժանված մնալ դասերի։

Ինչպես ամբողջ ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, բնակչությունը բաժանված էր նախ և առաջ երկու անհավասար խմբերի՝ արտոնյալների և հարկատուների։

Արևելյան Հայաստանի միացումից հետո, սկզբնական շրջանում, ցարական կառավարությունը չէր ձգտում վավերացնել կամ ճանաչել տեղական հողատերերի իրավունքները։ Հետագայում այդ քաղաքականությունը փոխվեց։ Ցարիզմը, ձգտելով տեղական բնակչության մեջ իր համար սոցիալական հենարան ստեղծել, ոչ միայն ճանաչեց նրանց իրավունքները, այլև ընդլայնեց դրանք։ Նախ 1840—50-ական թվականներին ընդունվեց մուլքադարների և թիուլդարների իրավունքը հողի նկատմամբ, իսկ 1866 թ. նրանց սկսեցին զինվորական և պետական ծառայության ընդունել ռուսական ազնվականությանը հավասար իրավունքներով[1]։

Հասարակության արտոնյալ դասերին էին պատկանում ժառանգական ու անձնական ազնվականները, խաները, բեգերը, մելիքները, աղաները, հոգևորականները և վաճառականությունը։ Կազմելով բնակչության չնչին փոքրամասնությունը, նրանք իշխում էին թե՛ տնտեսական և թե քաղաքական կյանքում։

Երևանի նահանգապետի 1886 թ. հաշվետվության համաձայն նահանգում կար ընդամենը 90478 ծուխ, 667.464 բնակչությամբ[2]։ Ծխերի 2,49%-ը (2250) և բնակչության 2,3%-ը (15368, որից 8046-ը տղամարդ)[3] պատկանում էր արտոնյալ դասին։ Նշված ծխերի մեծ մասը գտնվում էր գավառներում, իսկ նահանգի հինգ քաղաքներին բաժին էր ընկնում ընդամենը 622-ը[4]։

1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալները հնարավորություն են տալիս ավելի մանրամասն քննելու այդ հարցը։ Ըստ այդ տվյալների, Երևանի նահանգում կային 1978 ազնվականներ, 3917 բեգեր ու աղալարներ և ընդամենը 6 մելիքներ։ Նրանց ընդհանուր քանակը կազմել է 5901 մարդ, որից 3168-ը՝ արական, իսկ 2733-ը՝ իգական սեռի։ Նշված արտոնյալ դասերի տեղաբաշխումը նահանգում, ըստ գավառների, տրված է № 1 աղյուսակում[5]։

---

[1] «Полное собрание законов Российской империи», т. XI, с. 321.

[2] *ՍՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1284, ց. 223, գ. 214, թ. 2։*

[3] *Ըստ* «Обзор Эриванской губернии за 1886 г.» *աղբյուրի տվյալների հիման վրա Ա. Համբարյանի կատարած հաշվարկների։ Տե՛ս նրա «Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակն ու աղգային կազմը XIX դ. երկրորդ կեսին» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններիո», 1982, № 6, էջ 45)։*

[4] *Նույն տեղում, էջ 46։*

[5] *Աղյուսակը կազմված է* «Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из поссемейных списков 1886 г.» *(այսուհետև՝* «Свод статистических данных о населении Закавказского края», Тифлис, 1893) *աղբյուրի տվյալների հիման վրա։*

Աղյուսակ № 1

Գավառներ	ազնվական.		բեգեր, աղալ.		մելիքներ		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի	427	321	852	720	1	1	2322
Ալեքսանդրապոլի	182	196	7	13	—	—	398
Նախիջևանի	26	28	636	472	—	—	1162
Նոր Բայազետի	10	12	58	53	3	1	137
Սուրմալուի	328	340	—	—	—	—	668
Շարուր-Դարալագյազի	13	8	113	93	—	—	227
Էջմիածնի	45	42	467	433	—	—	987
Ընդամենը	1031	947	2133	1784	4	2	
	1978		3917		6		5901

Ինչպես երևում է № 1 աղյուսակից, Երևանի նահանգում բնակվել են ընդամենը 6 մելիքներ, որոնցից չորսը Նոր Բայազետի, իսկ երկուսը՝ Երևանի գավառում։ Ազնվականների, բեգերի ու աղալարների 39,34%-ը (մելիքների հետ միասին 2322 մարդ) բնակվել է Երևանի գավառում։ Երկրորդ տեղը բռնում է Նախիջևանի գավառը՝ 1162 մարդ (19,69%), երրորդը՝ Էջմիածնի գավառը՝ 987 մարդ (16,74%)։ Բավականին մեծաթիվ էր նաև Սուրմալուի գավառի ազնվականների քանակը (գավառում բեգեր, աղալարներ և մելիքներ չէին բնակվում)։ Մնացած՝ Ալեքսանդրապոլի, Շարուր Դարալագյազի և Նոր Բայազետի գավառներում բնակվում էին համապատասխանաբար 398 (6,74%), 227 (3,85%) և 137 (2,33%) մարդ։

Ազնվականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության մոտ 0,3, բեգերն ու աղալարները՝ 0,58, իսկ միասին՝ 0,88%-ը։ 1880-ական թվականների Կարսի մարզի բնակչության դասային կազմի մասին հավաստի, ամփոփ տեղեկություններ չունենք։ Դատելով Երևանի նահանգի տվյալներից, Կարսի մարզում ևս թվարկված դասերը չպիտի գերազանցեին բնակչության մեկ տոկոսի սահմանը։

Դարի 80-ական թվականների կեսերին Զանգեզուրում բնակվում էին 903 մելիքներ և 4378 բեգեր, Ղազախում՝ ընդամենը 4 ազնվականներ, 395 մելիքներ և 2320 բեգեր։ Շատ ավելի մեծաթիվ էր Շուշի գավառի ազնվականների, բեգերի ու մելիքների թվաքանակը՝ 6002 մարդ։ Բորչալուի գավառում մելիքներ չկային, սակայն ազնվականության հետ միասին բնակվում էին բեգեր, աղալարներ և խաներ, որոնց քանակը համեմատաբար փոքրաթիվ էր՝ 1781 մարդ։ Նշված արտոնյալների մասին ավելի կոնկրետ պատկերացում է տալիս № 2 աղյուսակը[6]։

Այսպիսով, նշված չորս գավառների ազնվականների, մելիքների, բեգերի, խաների և աղալարների ընդհանուր թվաքանակը կազմում էր 15784 մարդ, որից արական սեռի՝ 8980, իսկ իգական՝ 6804 մարդ։ Արտոնյալների նշված քանակից 2080-ը բնակվում էին Շուշի քաղաքում, մնացածը՝ գավառներում։ Ինչպես արդեն ասվեց, թվարկված արտոնյալների ամենամեծ խումբը բնակվում էր Շուշիի գավառում՝ 6002 մարդ, որը կազմում էր բնակչության 4,75%-ը։ Բավական մեծաթիվ էր նաև Զանգեզուրի գավառի արտոնյալների թվաքանակը՝ 5281 մարդ, որը կազմում էր բնակչության 4,26%-ը, Ղազախի գավառում՝

---

6 Աղյուսակը կազմված է «Свод статистических данных о населении Закавказского края» աղբյուրի տվյալների հիման վրա։

Աղյուսակ № 2

Գավառներ	ազնվական.		մելիքներ,		բեգեր, խաներ, ազալար.		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Զանգեզուրի	—	—	499	404	2510	1868	5281
Ղազախի	4	1	221	174	1282	1038	2720
Շուշիի	107	90	1308	1081	2086	1330	6002
Բորչալուի	198	153	—	—	765	665	1781
Ընդամենը	309	244	2028	1659	6643	4901	15784
	553		3687		11544		

3,2%-ը (2720 մարդ)։ Համեմատաբար փոքրաթիվ էին Բորչալուի գավառի թվարկված արտոնյալները՝ 1781 մարդ, կամ բնակչության 1,75%-ը[7], որը, սակայն, գերազանցում էր Երևանի նահանգի համապատասխան ցուցանիշը (0,88)։

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են ընձեռում դիտարկելու արտոնյալների նշված խմբերում կատարված քանակական փոփոխությունները և բնակչության կազմում նրանց դրված տեղը դարի վերջում։

Երևանի նահանգում 1897 թ. եղել են 8706 ժառանգական և 2117 անձնական ազնվականներ։ Ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիների թիվը 1650 էր[8]։ Ըստ գավառների թվարկված խավերի տեղաբաշխումը տրված է № 3 աղյուսակում[9]։

Աղյուսակ № 3

Գավառներ	ժառ. ազնվական.		անձ. ազնվակ. և ատիճ.		ժառ. և անձ. պատ. քաղ.		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի	1470	1307	502	433	330	262	4304
Ալեքսանդրապոլի	492	407	243	252	233	217	1844
Նախիջևանի	778	702	153	136	59	54	1882
Նոր Բայազետի	120	117	28	26	162	147	600
Սուրմալուի	460	451	61	33	17	17	1039
Շարուր-Դարալագ.	649	650	58	32	38	34	1461
Էջմիածնի	560	543	87	73	48	40	1351
Ընդամենը	4529	2177	1132	985	887	771	
	8706		2117		1658		12481

7 Հաշվարկները կատարված են «Свод статистических данных о населении Закавказского края» աղբյուրի տվյալների հիման վրա։

8 «Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и по некоторым занятиям» (այսուհետև՝ «Распределение населения»), СПб., 1905, с. 18.

9 «Первая всеобщая перепись населения Российской империи», 1897 г. (այսուհետև՝ «Первая всеобщая перепись»), XXI, Эриванская губерния, СПб., 1905, с. 30.

Ինչպես երևում է № 3 աղյուսակից, բացարձակ քանակով Երևանի գավառի ժառանգական, անձնական ազնվականները, պատվավոր քաղաքացիներն ու աստիճանավորները գրավում էին առաջին տեղը՝ 4304 մարդ, որը կազմում էր ամբողջի 34,48%-ը։ Ազնվականության մոտ կեսը և աստիճանավորների ճնշող մեծամասնությունը բնակվում էր նահանգական կենտրոն Երևան քաղաքում։ Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառներում նշված արտոնյալների քանակը մոտավորապես հավասար էր՝ 1882 և 1844 մարդ (15,07 և 14,78%-ը)։ Շարուր-Դարալագյազի գավառում բնակվում էր նրանց 11,7%, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում՝ համապատասխանաբար 10,83 և 8,32%-ը։ Բոլորից քիչ բաժին էր ընկնում Նոր Բայազետի գավառին՝ ընդամենը 4,8%-ը։

Ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորները 1897 թ. կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,5%-ը։ 1880-ական թվականների համեմատությամբ ազնվականությունը քանակապես ավելացել էր։ Աճել էր նաև մնացած խավերի թվաքանակը։ Սակայն նահանգի բնակչության նկատմամբ եղած տոկոսային հարաբերությունը համարյա թե չէր փոխվել։ Եթե նկատի չունենանք պատվավոր քաղաքացիներին ու աստիճանավորներին, որոնք 1880-ական թվականներին չէին հաշվառվել, ապա ժառանգական և անձնական ազնվականները դարի վերջին կազմում էին բնակչության մոտ մեկ տոկոսը, որն այնքան էլ հեռու չէ 1886 թ. համապատասխան ցուցանիշից (0,88%)։

Ի տարբերություն 1886 թ. ընտանեկան ցուցակագրության, 1897 թ. մարդահամարը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու նաև Կարսի մարզի բնակչության դասային կազմը։ Ժառանգական ազնվականների քանակը մարզում կազմել է 2089, անձնական ազնվականներինը և ոչ ազնվական աստիճանավորներինը՝ 894 մարդ[10]։ Համեմատաբար սակավաթիվ էր ժառանգական և անձնական պատվավոր քաղաքացիների քանակը՝ 272 մարդ[11]։

Նշված դասերի բաժանումն ըստ սեռերի և նրանց տեղաբաշխումը մարզի օկրուգներում տրվում է ստորև ներկայացվող № 4 աղյուսակում[12]։

Աղյուսակ № 4

Օկրուգներ	Ժառանգական. ազնվական.		անձ. ազնվակ. աստիճանավոր.		ժառ. և անձ. պատ. քաղ.		ընդամենը
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Կարսի	484	319	268	229	59	42	1401
Արգահանի	161	135	68	41	70	92	567
Կաղզվանի	407	362	144	86	6	1	1006
Օլթիի	98	123	37	21	1	1	281
Ընդամենը	1150	939	517	377	136	136	
	2089		894		272		3255

Ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորները, ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Կարսի մարզում, տեղաբաշխված էին խիստ անհամաչափ։ Կարսի օկրուգում բնակվում էր 43,04%-ը (1401 մարդ), Կաղզվանի օկրուգում՝ 1006 մարդ, կամ ընդհանու-

---

10 «Распределение населения», с. 18.

11 Նույն տեղում։

12 Աղյուսակը կազմված է «Первая всеобщая перепись», GXIV, тетрадь I, Карсская область, 1900, с. 32 աղբյուրի տվյալների հիման վրա։

րի 30,91%-ը։ Փաստորեն այս երկու օկրուգներին բաժին էր ընկնում կեսից շատ ավելին՝ 70,95%-ը։ Արդահանի օկրուգում բնակվում էր նրանց 17,42%-ը (567 մարդ), իսկ Օլթիում՝ ընդամենը 8,63%-ը (281 մարդ)։

Ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիներն աստիճանավորների հետ միասին կազմում էին Կարսի մարզի ընդհանուր բնակչության 1,12%-ը՝ ավելի քիչ, քան Երևանի նահանգում (1,5%)։

Արևելյան Հայաստանի բնակչության դասային կառուցվածքում թվարկված դասերի տեսակարար կշիռը շատ ավելի մեծ էր Ղազախի, Զանգեզուրի և հատկապես Շուշիի գավառներում։ Այսպես, Շուշիում ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորների հետ (ընդ որում, վերջիններն այնքան էլ բազմաքանակ չէին) կազմում էին գավառի բնակչության 6,02%-ը (8358 մարդ)[13]։ Հայաստանի այդ հին շրջանում բոլորից շատ էին պահպանվել ֆեոդալական դասի ներկայացուցիչները՝ մելիքները և այլ հողատերերը։

Այդ ժամանակաշրջանի ուսումնասիրողներից մեկը՝ Ս. Եղիազարովը, մելիքներին ու բեգերին բաժանում է երեք խմբի։ Առաջին խումբը ժառանգական հին մելիքներն ու բեգերն էին, որոնց կոչումները շնորհվել էին պարսկական շահերի հատուկ հրովարտակով՝ ֆիրմանով։ Երկրորդ խումբը տեղական խաների կողմից այդ աստիճաններին բարձրացվածներն էին։ Երրորդ խմբի ներկայացուցիչները գյուղերի, համայնքների կառավարիչներն էին և որոշ արտոնություններից օգտվում էին միայն տվյալ շրջանում։ Դրանք ըստ էության մելիքներ ու բեգեր չէին և ոչ էլ այդ կոչումները հաստատող որևէ հրովարտակ ունեին[14]։ Այս վերջին խումբը փաստորեն կապ չուներ մելիքների ու բեգերի դասի հետ և միայն տեղական ժողովուրդն էր նրանց այդպես կոչում։ Այնպես որ, կարծում ենք, շատ ավելի ճիշտ կլիներ նրանց երկու խմբի բաժանելը։

Շուշիի գավառի բնակչության ընդհանուր թվաքանակում ժառանգական ազնվականները, որոնց ճնշող մեծամասնությունը տեղաբնիկ էին, կազմում էին 5,16% (7159 մարդ)։ Նշված դասերի քանակը մեծ էր նաև Զանգեզուրի գավառում՝ 6868 մարդ, որը կազմում էր գավառի բնակչության մոտ 5%-ը և Ղազախի գավառում՝ 3754 մարդ[15] (գավառի բնակչության 3,35%-ը)։ Համեմատաբար փոքրաթիվ էր Բորչալուի գավառի նշված արտոնյալների քանակը՝ 2319 մարդ (1,80%)[16]։

Նշված գավառներում ժառանգական-անձնական ազնվականների, պատվավոր քաղաքացիների ու աստիճանավորների քանակը և բաժանումն ըստ սեռերի տրվում է ստորև բերվող № 5 աղյուսակում[17]։

Արևելյան Հայաստանի բնակչության արտոնյալների թվում էր նաև հոգևոր դասը։ Բնակչությունն ըստ սոցիալական կառուցվածքի դասակարգելիս հոգևորականությունը դիտարկվում է մտավորականության կազմում, իսկ վերջինս՝ միջին դասերում։

Հայ եկեղեցին, հոգևորականությունը, անկախ նվաճողներից, միշտ էլ գտնվել են արտոնյալ պայմաններում։ Դարեր շարունակ հայ ժողովրդի պետականությունից զուրկ լինելը նպաստել է եկեղեցու և հոգևորականության դերի ու հեղինակության բարձրացմանը, արտոնությունների ընդլայնմանը։

Ցարիզմը ձգտելով եկեղեցու միջոցով ևս ամրապնդել իր դիրքերն Արևելյան Հայաստանում, ազդեցության տակ պահել այլ երկրների հպատակության

---

13 Նույն տեղում, GXIII, Елисаветпольская губерния, СПб., 1904, с. 32.

14 С. А. Егиазаров, Административно-экономический строй сельской общины Ереванской губернии («Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. 1, Тифлис, 1887, с. 3).

15 «Первая всеобщая перепись», GXIII, Елисаветпольская губерния, с. 32.

16 Նույն տեղում, GXIX, Тифлисская губерния, СПб., 1905, с. 35.

17 Աղյուսակը կազմված է «Первая всеобщая перепись», GXIII, Елисаветпольская губерния, с. 32. GXIX, Тифлисская губерния, с. 35 աղբյուրների տվյալների հիման վրա։

տակ գտնվող հայերին, ոչ միայն պահեց եկեղեցու, հոգևորականության արտոնությունները, այլև նրանց շնորհեց որոշակի իշխանություն, որն արտացոլվեց 1836 թ. Նիկոլայ I-ի հաստատած «Կանոնագրությունում»[18]։ Հայ հոգևորականությունն ազատվում էր մարմնական պատիժներից, հարկերից և զանազան այլ պարտականություններից, դառնալով ռուսական կայսրության արտոնյալ դասերից մեկը։ Այդ վիճակը պահպանվել էր նաև XIX դ. 80—90-ական թվականներին։

Աղյուսակ № 5

Գավառներ	Ժառանգական ազնվականներ		անձ. ազն. ատիճան.		ժառ. և անձ. պատ. քազ.		միասին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Զանգեզուրի	3198	2695	56	66	435	415	6868
Ղազախի	1681	1476	112	100	201	184	3754
Շուլլի	3814	3345	211	218	390	380	8358
Որշալուի	963	917	156	94	93	96	2319
Ընդամենը	9656	8433	535	478	1119	1078	
	10.089		1.013		2.197		21,299

Արտոնյալների դասում էր նաև մահմեդական հոգևորականությունը, որի թիվը քիչ չէր Արևելյան Հայաստանում։ Հրատարակված և արխիվային տվյալները մեզ հնարավորություն են տալիս որոշելու նրանց թվաքանակը, տեղաբաշխումը և տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության կազմում։

Արևելյան Հայաստանի շրջաններից Երևանի նահանգում 1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով եղել են ընդամենը 7607 հոգևոր դասին պատկանողներ, որոնցից արական սեռի էին 4172-ը, իգական՝ 3435-ը[19]։ Հոգևոր դասի ընդհանուր թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմել հայ լուսավորչականները՝ 6741 (3677 տղամարդ և 3064 կին)[20]։ Հայ կաթոլիկները կազմել են չնչին փոքրամասնություն՝ 56 տղամարդ և 41 կին (ընդամենը 97 մարդ)։ Փոքրաթիվ էր նաև ուղղափառ հոգևորականությունը՝ ընդամենը 59 մարդ (38 տղամարդ և 21 կին)։ Մնացած հոգևորականները պատկանում էին մահմեդական շիա (691 մարդ) և սյունի՝ (19 մարդ) աղանդներին (ընդամենը 710 մարդ)։

Հայ լուսավորչականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,02%-ը, իսկ հայ կաթոլիկ և ուղղափառ հոգևորականները՝ 0,01%-ը։ Մահմեդական հոգևորականության տեսակարար կշիռը հավասար էր 0,1%-ի։ Ընդհանուր առմամբ հոգևորականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,13%-ը։

Երևանի նահանգի հոգևոր դասի 26,17%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի, 21,38%-ը՝ Էջմիածնի գավառներում։ Երևանի գավառում բնակվում էր 18,65%-ը։ Բազմաթիվ էր նաև Նախիջևանի գավառի հոգևոր դասը՝ 12,2%։ Նահանգի մնացած՝ Նոր Բայազետի, Սուրմալուի և Շարուր Դարալագյազի գավառների հոգևոր դասի ներկայացուցիչների թվաքանակը համեմատաբար

18 Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, Երևան, 1974, էջ 112—115։

19 «Свод статистических данных о населении Закавказского края».

20 1886 թ. ընտանեկան ցուցակագրության ժամանակ հայ լուսավորչական հոգևոր դասին պատկանող կանանց թիվը նշված է 3164, որը սխալ է։ Տե՛ս նշված աղբյուրի «Свод населения по городам и уездам Эриванской губернии» բաժինը։

փոքր էր։ Նրանց բաժին էր ընկնում բնակչության համապատասխանաբար 8,54, 7,05 և 6,01%-ը։

Հոգևոր դասը մեծ թիվ էր կազմում Արևելյան Հայաստանի այլ շրջաններում ևս։ Շուշիի գավառում նրանց թվաքանակը հասնում էր 2461-ի, որից իգական սեռին պատկանում էր 1024-ը։ Բավականին փոքրաթիվ էր մահմեդական հոգևոր դասը՝ ընդամենը 390 մարդ։ Մնացած 2071-ը հայ լուսավորչականներ էին, որը կազմում էր Շուշիի գավառի բնակչության 1,64%-ը, իսկ մահմեդական շիա աղանդին պատկանող հոգևորականությունը՝ 0,31%-ը (միասին՝ 1,95%-ը)։

Բորչալուի գավառի հոգևոր դասի ընդհանուր քանակը հավասար էր 1065-ի, որից արական սեռի էր 576, իգական՝ 489 մարդ։ Այս գավառի հոգևոր դասի կազմն ըստ դավանանքի ավելի բազմազան էր։ Գերակշռում էր հայ հոգևորականությունը՝ 570 մարդ (47-ը հայ կաթոլիկներ)։ Երկրորդ տեղը (377 մարդ) գրավում էին ուղղափառները։ Մահմեդական հոգևորականությունը փոքրաթիվ էր։

Հայ լուսավորչական հոգևոր դասը կազմում էր Բորչալուի գավառի բնակչության 0,52, հայ կաթոլիկները՝ 0,05, ուղղափառները՝ 0,38%-ը։ Սյունի և շիա աղանդի մահմեդական հոգևոր դասերը կազմում էին գավառի բնակչության 0,1%-ից քիչ ավելին։ Ընդհանուր առմամբ հոգևոր դասը կազմում էր Բորչալուի բնակչության 1,05%-ը։

Զանգեզուրի գավառի հոգևոր դասի ընդհանուր քանակը հավասար էր 1831-ի, որից 806-ը՝ իգական սեռի։ Հոգևորականության մեծ մասը՝ 1583 մարդ, կազմում էին հայ լուսավորչականները, մնացած 248-ը պատկանում էին մահմեդական շիա և սյունի աղանդներին։ Հայ հոգևորականությունը կազմում էր գավառի բնակչության 1,28, սյունիները՝ 0,05, իսկ շիաները՝ 0,15, միասին՝ 1,48%-ը։

Ղազախի գավառում, նորից ըստ 1886 թ. ընտանեկան ցուցակագրության տվյալների, կային 935 հոգևոր դասին պատկանողներ (517-ը արական, 418-ը իգական սեռի), որից 459-ը հայ լուսավորչականներ էին (բնակչության 0,54%-ը)։ Շիա հոգևորականները կազմում էին բնակչության 0,24, սյունիները՝ 0,32, իսկ ամբողջ հոգևոր դասը՝ 1,1%-ը։

1880-ական թվականների Կարսի մարզի հոգևորականության քանակի վերաբերյալ տեղեկություններ չկան։ Պետք է ենթադրել, որ մարզի հոգևոր դասը բնակչության նկատմամբ ունեցել է մոտավորապես այն տոկոսային հարաբերությունը, ինչ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններում, այսինքն տատանվել է 1,1-ից (Բորչալուի գավառում) մինչև 1,95%-ի սահմաններում (Շուշիի գավառում)։

Այսպիսով, XIX դ. 80-ական թվականներին Արևելյան Հայաստանում հոգևոր դասի ընդհանուր քանակը (առանց Կարսի մարզի) հավասար էր 13829 մարդու, որից 11477-ը հայ լուսավորչականներ էին։ Հոգևոր դասը կազմում էր բնակչության 1,25%-ը։

Ռուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս քննելու հոգևոր դասի քանակական փոփոխությունները XIX դ. 90-ական թվականների վերջին։

Երևանի նահանգում 1897 թ. եղել է քրիստոնյա հոգևոր դասին պատկանող 6531 մարդ, որից քաղաքներում բնակվել են 1078-ը[21]։ Նշված քանակից 3422-ը եղել են արական սեռի, իսկ 3109-ը՝ իգական[22]։ Ինչպես 1880-ական, այնպես էլ 1890-ական թվականներին հոգևոր դասը բազմաքանակ էր Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառներում, որոնցում բնակվում էին ընդհանուրի 24,07 և 22,63%-ը, Երևանի գավառում՝ 18,5%-ը։ Նոր Բայազետի գավա-

---

21 «Первая всеобщая перепись», GXXXI, Эриванская губерния, с. 2.

22 Նույն տեղում, էջ 30։

ին բաժին էր ընկնում ընդհանուրի 12,04, իսկ Նախիջևանին՝ 10,93%-ը։ Համեմատաբար սակավաթիվ էր Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի հոգևոր դասը (6,92 և 4,87%)[23]։

Վիճակագրական նյութերը հնարավորություն չեն տալիս պարզելու մահմեդական և այլ հոգևոր դասերի թվաքանակն ըստ գավառների։ Սակայն հայտնի է, որ նահանգում 1897 թ. եղել են այլ դավանանքի 1032 հոգևորականներ[24]։

Այսպիսով, Երևանի նահանգի հոգևոր դասի ընդհանուր քանակը 1897 թ. կազմում էր 7563 մարդ, կամ բնակչության 0,91%-ը։ Դարի 80-ական թվականների հետ համեմատած հոգևոր դասը ոչ միայն չէր աճել, այլև բացարձակ քանակով նվազել էր (44 մարդով), հետևապես նվազել էր նաև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ (0,22%)։

Կարսի մարզի քրիստոնյա հոգևոր դասը 1897 թ. կազմել է 1332 մարդ, որից արական սեռին պատկանում էին 733-ը, իգականին՝ 599-ը[25]։ Նշված քանակից 235-ը (17,64%-ը) բնակվում էր մարզի քաղաքներում, 1097-ը (82,36%-ը) օկրուգներում։

Քրիստոնյա հոգևոր դասի կեսից ավելին՝ 722-ը (54,2%-ը) բնակվում էր Կարսի, իսկ 462-ը (34,69%-ը) Կաղզվանի օկրուգներում։ Հոգևոր դասի անանշան տոկոսը (6,61 և 4,5) բաժին էր ընկնում Արդահանի և Օլթիի օկրուգներին։ Նշենք նաև, որ եթե Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում հայ լուսավորչականները կազմում էին քրիստոնյա և ընդհանուր հոգևոր դասի բացարձակ մեծամասնությունը, ապա Կարսի մարզում ընդհանուր քանակի կեսից էլ պակասը՝ 619 մարդ[26]։ Բավականին մեծ թիվ էր կազմում նաև մահմեդական հոգևորականությունը՝ 206 մարդ։ Այլ դավանանքների հոգևորականներ էին 44-ը։ Այսպիսով, մարզի հոգևոր դասի ընդհանուր քանակը կազմում է 1582 մարդ, կամ բնակչության 0,54%-ը[27]։

Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում բոլորից բազմաքանակը Շուշիի գավառի քրիստոնյա հոգևոր դասն էր՝ 1184 մարդ (արական՝ 621, իգական՝ 563), որից 270-ը բնակվում էր Շուշի քաղաքում[28]։

Հոգևոր դասը Շուշի գավառում 1880-ական թվականների հետ համեմատած 1897 թ. կրճատվել էր մոտ կիսով չափ։ Քանակապես շատ ավելի նվազել էր Զանգեզուրի և Ղազախի գավառների հոգևոր դասը՝ կազմելով ընդամենը 859 և 325 մարդ[29]։ Նույն պատկերն էր նկատվում նաև Բորչալուի գավառում, որտեղ քրիստոնյա հոգևոր դասի քանակը հավասար էր 838 մարդու[30]։

Այսպիսով, XIX դ. 80—90-ական թվականներին Արևելյան Հայաստանում հոգևոր դասը ոչ միայն քանակապես չէր աճել, այլև նվազել էր, այն դեպքում, երբ բնակչության ընդհանուր աճը կազմել էր մոտ 48%։

Արևելյան Հայաստանի բնակչության արտոնյալ դասերում էր նաև վաճառականությունը։ Չնայած մի շարք հեղինակներ անդրադարձել են այդ դասին, այս կամ այն կերպ գնահատել տնտեսական կյանքում նրա խաղացած դերը, այնուամենայնիվ, արևելահայ վաճառականությունը դեռևս թույլ է ուսումնասիր-

---

23 Հաշվարկները կատարված են վերոհիշյալ աղբյուրների հիման վրա։

24 «Распределение населения». с. 27; «Первая всеобщая перепись», GXXI, Эриванская губерния, с. 104.

25 «Первая всеобщая перепись», GXIV, тетрадь I, Карсская область, с. 32.

26 «Распределение населения», с. 27.

27 «Процентное распределение наличного населения империи обоего пола по группам занятий, показанным при переписи главными, как доставляющие средства существования», СПб., 1905, էջ 17-ում տրված է 0,52%։

28 «Первая всеобщая перепись», GXIII, Елисаветпольская губерния, с. 32.

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, GXIX, Тифлисская губерния, с. 35.

ված։ Ինչ վերաբերում է վաճառականության քանակին, որպես ինքնուրույն դասի բնակչության կազմում վերջում նրա գրված տեղին, ապա դրան անդրադարձել է միայն Ա. Համբարյանը[31]։

Արևելյան Հայաստանի միացումից հետո ռուսական վաճառականությանը վերաբերող օրենսդրական ակտերը տարածվեցին նաև տեղական վաճառականության վրա։ Ռուսական կայսրությունում, բնական է, նաև Արևելյան Հայաստանում, սկսած XIX դ. 60-ական թվականներից, վաճառականական դասը բաժանվում էր երկու գիլդայի[32], որոնցում գրանցվելու համար հարկավոր էր վերցնել վկայական՝ վճարելով համապատասխան անդամավճար։ Վաճառականությունը միակ դասն էր, որում գրանցվելու համար պետք է վճարվեր որոշակի գումար։ 1898 թ. նոր օրենքի ընդունումից հետո, վաճառականական դասին պատկանելն անկախ դարձավ տնտեսական գործունեությունից և կապված էր միայն դասային վկայագիր վերցնելու հետ[33]։

1886 թ. տվյալներով Երևանի նահանգում վաճառականական դասին պատկանում էին 2539 մարդ, որից արական սեռի էին 1301-ը, իգական՝ 1238-ը[34]։ Վաճառականական դասից ընդամենը 244-ն էր բնակվում գավառներում, իսկ մնացած 2295-ը՝ նահանգի քաղաքներում։ Ընդ որում, քաղաքաբնակների 74,2%-ը բաժին էր ընկնում Ալեքսանդրապոլին և միայն 25,8%-ը մնացածներին։

Ընդհանուր առմամբ վաճառականության դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 0,38%-ը։

Կարսի մարզի 1880-ական թվականների վաճառականական դասի թվաքանակի վերաբերյալ հավաստի տեղեկություններ չկան։

Զանգեզուրի գավառում վաճառականական դասը բացակայում էր, իսկ Ղազախի գավառում կար ընդամենը 15 վաճառական, Բորչալուում՝ 29-ը[35], Բավականին մեծաթիվ էր Շուշիի գավառի վաճառականական դասը՝ 1110 մարդ (650-ը արական, իսկ 450-ը՝ իգական սեռի)[36], որը կազմում էր բնակչության 0,87%-ը և բնակվում էր բացառապես Շուշի քաղաքում։

Դարի վերջին վաճառականական դասի քանակն Արևելյան Հայաստանում գնալով պակասում է, չնայած առևտուրը և արդյունաբերությունը զարգանում էին[37]։ Երևանի նահանգում այդ դասի քանակը կրճատվում է մոտ 60%-ով, կազմելով ընդամենը 1014 մարդ (492-ը արական, իսկ 522-ը՝ իգական սեռի)[38]։

Ինչպես 1880-ական թվականներին, այնպես էլ դարի վերջին վաճառականության ճնշող մեծամասնությունը բնակվում էր նահանգի քաղաքներում, ամենից առավել՝ Ալեքսանդրապոլում։

1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն, Կարսի մարզում վաճառականական դասի քանակը կազմում էր 241 մարդ (128-ը արական, իսկ

---

31 Ա զ ա տ Հ ա մ բ ա ր յ ա ն, նշվ. հոդվ., էջ 43—52։

32 Առաջին գիլդայի մեջ մտնում էին այն վաճառականներն ու ձեռնարկատերերը, որոնք վճարում էին տարեկան 500 ռ. ավելի հարկ, երկրորդում՝ նրանք, որոնք վճարում էին 50—500 ռ. «Свод законов Российской империи», т. IX, СПб., 1899, с. 532—533; А. Н. Б о х а н о в, Российское купечество в конце XIX—начале XX века («История СССР», 1985, № 4, с. 106—107).

33 «Свод законов Российской империи», т. IX, с. 531.

34 «Свод статистических данных о населении Закавказского края».

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում։

37 Այդ երևույթը նկատելի էր նաև Ռուսաստանում և կապված էր 1898 թ. օրենքի հետ, որի համաձայն վաճառականական դասին պատկանելը դարձավ անկախ տնտեսական գործունեությունից։

38 «Первая всеобщая перепись», GXXI, Эриванская губерния, с. 30.

113-ը՝ իգական սեռի)[39]։ Վաճառականական դասը հիմնականում բնակվում էր Կարսի օկրուգում (171 մարդ)։

Զանգեզուրի գավառում, ինչպես դարի 80-ական, այնպես էլ 90-ական թվականներին վաճառականներ չկային, Ղազախի գավառում նրանց քանակը հավասար էր 15[40], Բորչալուում՝ 19[41], Շուշիի գավառում՝ 597 մարդու[42], 1860-ական թվականների համեմատությամբ նվազելով մոտ կիսով չափ։

Ընդհանուր առմամբ ժառանգական-անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորներն ու հոգևորականությունը և վաճառականությունը, կազմելով Արևելյան Հայաստանի բնակչության չնչին փոքրամասնությունը, ունենալով լայն «արտոնություններ, հարստահարում էին մեծամասնությանը և, լինելով ցարական կառավարության սոցիալական հենասյուներից մեկը, նպաստում էին նրա հակաժողովրդական, հետադիմական քաղաքականության կենսագործմանը»[43]։

ПРИВИЛЕГИРОВАННЫЕ СОСЛОВИЯ В СОСТАВЕ НАСЕЛЕНИЯ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (80—90-е годы XIX в.)

ГАСПАР КИРАКОСЯН

Резюме

Согласно посемейному списку 1886 г., в Эриванской губернии число дворян, агаларов, беков и меликов составляло 5901 человек (0,88% населения), а в уездах Зангезур, Казах, Шуши и Борчалу—15.784 человека (3,5%).

По данным первой всеобщей переписи Российской империи 1897 г. число потомственных-личных дворян и почетных граждан наряду с чиновниками составляло 12.481 человек (1,5%); в Карсской области—3.255 (1,12%), а в указанных уездах—21.299 (4,5%) человек.

Число представителей духовного сословия, за исключением Карсской области, составляло 13.829 (1,25%), а в 1897 г.—только христианское духовное сословие составляло 11.069 (0,68%) человек.

Крупечество в Эриванской губернии в 1886 г. составляло 2539 ч. (0,38%), в уезде Шуши—1110 (0,78%). В остальных районах Восточной Армении их было сравнительно меньше.

Потомственно-личные дворяне, почетные граждане, чиновники, духовенство, а также купечество, составляя привилегированное меньшинство населения Восточной Армении, эксплуатировали массы, и, являясь социальной опорой царизма, способствовали осуществлению его политики.

---

39 Նույն տեղում, GXIV, тетрадь I, Карсская область, с. 32.
40 Նույն տեղում, GXIII, Елисаветпольская губерния, с. 32.
41 Նույն տեղում, GXIX, Тифлисская губерния, с. 35.
42 Նույն տեղում, GXIII, Елисаветпольская губерния, с. 32.
43 Ազատ Համբարյան, նշվ. հոդվ., էջ 51—52։